ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/256

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Հարսնաձոր» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ, ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15514-2021 գրությամբ «Հարսնաձոր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 16.09.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1651-21 գրության հիման վրա, 25.09.2021թ.-ին «Հարսնաձոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 25.09.2021թ.-ին:

25.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/256 համարի ծածկագիրը:

05.10.2021թ.-ին, 13.10.2021թ.-ին և 22.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2021թ.-ին:

2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 16.09.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1651-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ 2021թ.-ի սեպտեմբերի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 15:00-ին տեղի է ունեցել ապրանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Հարսնաձոր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09207232, Հեռ.՝ +(374)91210706, էլ. հասցե՝ Harsnadzor@yandex.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

Ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են սույն գնման Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Ներկայացված Ընթացակարգին մասնակցելու դիմում–հայտարարության համաձայն հրավերի հավելված 1-ի, երկրորդ և երրորդ պարբերություններում լրացված չէ մասնակցի անվանումը:

Ծավալաթերթ-նախահաշվի «Ընդհանուր» դաշտում նշված արժեքը՝ 8892 և գնային առաջարկով ներկայացված գումարը՝ 8892000 դրամ են: Ծավալաթերթում եթե հաշվարկն իրականացվել է հազարական դրամի հաշվարկով, ապա խնդրում ենք իրականացնել համապատասխան նշում ծավալաթերթում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 08.09.2021թ.-ին համակարգի միջոցով ծանուցմամբ «Հարսնաձոր» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերում նշված քարտուղարի էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել են անհամապատասխանություններ արձանագրած փաստաթղթերի նոր տարբերակները, սակայն ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները դարձյալ գերազանցում են Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և հրապարակված են տեղեկագրում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հարսնաձոր» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հարսնաձոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Հարսնաձոր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15514-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

19.10.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Հարսնաձոր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված թիվ «ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության համաձայն «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են սույն գնման Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Ներկայացված Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության համաձայն հրավերի հավելված 1-ի, երկրորդ և երրորդ պարբերություններում լրացված չէ մասնակցի անվանումը:

Ծավալաթերթ-նախահաշվի «Ընդհանուր» դաշտում նշված արժեքը 8892 և գնային առաջարկով ներկայացված գումարը՝ 8892000 տարբեր են: Ծավալաթերթում եթե հաշվարկն իրականացվել է հազարական դրամի հաշվարկով, ապա խնդրում ենք իրականացնել համապատասխան նշում ծավալաթերթում:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով 24.08.2021թ. կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերում նշված քարտուղարի էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել են անհամապատասխանություններ արձանագրած փաստաթղթերի նոր տարբերակները, սակայն ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները դարձյալ գերազանցում են Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց «Հարսնաձոր» ՍՊԸ ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» 2Z օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Հարսնաձոր» ՍՊԸ-ն (այսահետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված թիվ ՀԱԱՀ-ՀՄԱՇՁԲ-21/113 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության համաձայն՝ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհմապատասխանություններ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով 24.08.2021թ. կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերում նշված քարտուղարի էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել են անհամապատասխանություններ արձանագրած փաստաթղթերի նոր տարբերակները, սակայն ծավալաթերթ-նախահաշվում ներառված

«Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները դարձյալ գերազանցում են Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, իսկ արձանագրված նիշերի շեղումը բացառապես ծավալաթերթի Excel ֆարից PDF ֆայլի վերաձևակերպման ծրագրային խնդիր է և Հրավերով նախատեսված աշխատանքների իրականացման ծավալաթերթ-նախահաշվի հաշվարկների մեջ որևէ էական շեղում չի առաջացնում:

Տվյալ պարագայում ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով և մերժելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ 3-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը, մասնավորապես անհամապատասխանությունների շտկման ժամկետում ներկայացվել է շտկված փաստաթղթերը, սակայն գնահատող հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերը գնահատել է որպես անբավարար և մերժել:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Հարսնաձոր» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցն ի լրումն ներկայացված դիրքորոշման 21.10.2021թ.-ին հայտնել է նաև հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Հարսնաձոր» ՍՊԸ-ն մասնակցել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված թիվ ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113 ծածկագրով գնման ընթացակարգին, սակայն ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհմապաասխանություններ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով 24.08.2021թ. կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերում նշված քարտուղարի էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել են անհամապատասխանություններ արձանագրած փաստաթղթերի նոր տարբերակները, սակայն ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները դարձյալ գերազանցում են Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշել էր «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, որը արձանագրվել է նաև գնահատող հանձնաժողովի համապատասխան արձանագրությամբ, սակայն հատկանշական է նաև այն փաստը, որ այդ ժամանակաշրջանում առաջացել էր էլեկտրոնային փոստի տեխնիկական խնդիրներ և շտկված փաստաթղթերը ներկայացվել էր harsnadzor@yandex.ru էլ. հասցեից /որը գրանցված է armeps համակարգում/, մինչդեռ շտկումը կատարվել է harsnadzor@bk.ru էլ. հասցեից, քանի որ armeps համակարգում գրանցված Ընկերության էլ. հասցեն անհասկանալի տեխնիկական պատճառներով չի գործում, այսինքն չի ստացվում ստանալ ծանուցումներ և ընդհանրապես օգտագործել էլ. հասցեն:

Տվյալ պարագայում ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով և մերժելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ 3-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը, մասնավորապես անհամապատասխանությունների շտկման ժամկետում ներկայացվել է շտկված

փաստաթղթերը, սակայն գնահատող հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերը գնահատել է որպես անբավարար և մերժել:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը «Հարսնաձոր» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

4. <u>ՍՑ-LO-2021/256 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.09.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԱՀ-ՀՄԱՇՁԲ-21/113» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան քոլեջի վնասված տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշվով սահմանվել են աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները. Մասնավորապես՝ «Քանդման աշխատանքներ» բաժնի համար սահմանվել է՝ 1.17 %:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հարսնաձոր» ՍՊԸ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԱՀ-ՀՄԱՇՁԲ-21/113» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով հրավերի կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը,

ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.09.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հարսնաձոր ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը: Ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, երկրորդ և երրորդ պարբերություններում լրված չէ մասնակցի անվանումը: Ծավալաթերթ-նախահաշվի «Ընդհանուր» դաշտում նշված արժեքը՝ 8892 և գնային առաջարկով ներկայացված գումարը՝ 8892000 տարբեր են: Ծավալաթերթում եթե հաշվարկն իրականացվել է հազարական դրամի հաշվարկով, ապա խնդրում ենք իրականացնել համապատասխան նշում ծավալաթերթում:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Հարսնաձոր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 08.10.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի harsnadzor@yandex.ru էլ. փոստի հասցեին:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը 10.09.2021թ.-ին արձանագրել է, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանություններ արձանագրած փաստաթղթերի նոր տարբերակները, սակայն ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները դարձյալ գերազանցում են սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

ix. Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները,

որոշել է «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

x. Մասնակցի կողմից հայտով և ապա որպես շտկում ներկայացված Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան քոլեջի վնասված տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշվում «Քանդման աշխատանքներ» բաժնի համար նշել է՝ 3.18 %:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15514-2021 գրությամբ «Հարսնաձոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված

ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Նույն ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.09.2021թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են

անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.09.2021թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան քոլեջի վնասված տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշվով սահմանվել են աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները. Մասնավորապես՝ «Քանդման աշխատանքներ» բաժնի համար սահմանվել է՝ 1.17 %: Հանձնաժողովի 10.09.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը: Ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, երկրորդ և երրորդ պարբերություններում լրված չէ մասնակցի անվանումը: Ծավալաթերթ-նախահաշվի «Ընդհանուր» դաշտում նշված արժեքը՝ 8892 և գնային առաջարկով ներկայացված գումարը՝ 8892000 տարբեր են: Ծավալաթերթում եթե հաշվարկն իրականացվել է հազարական դրամի հաշվարկով, ապա խնդրում ենք իրականացնել համապատասխան նշում ծավալաթերթում, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Հարսնաձոր» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի

ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 08.10.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի harsnadzor@yandex.ru էլ. փոստի հասցեին, սակայն «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Քանդման աշխատանքներ» բաժնի համար հաշվարկված կշիռների շեղումները դարձյալ գերազանցել են Ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Վերոգրյալներով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները, որոշել է «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի կողմից հայտով և ապա որպես շտկում ներկայացված Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան քոլեջի վնասված տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշվում «Քանդման աշխատանքներ» բաժնի համար նշել է՝ 3.18 %:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հարսնաձոր» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-21/113» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15514-2021 գրությամբ «Հարսնաձոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/256 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հարսնաձոր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**